**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ**

**Ն Ա Խ Ա Գ Ա Հ**

# Հ Ր Ա Մ Ա Ն

«21» ապրիլի 2025 թ. N 57-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N 107-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշման հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետը և հաշվի առնելով Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի 2025 թվականի ապրիլի 9-ի N Ե/01/607-25 գրությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ  Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024 թվականի դեկտեմբերի 3-ի «Քաղաքաշինության բնագավառում շարունակական մասնագիտական զարգացումն ապահովող միջոցառման ծրագրի հաստատման և կրեդիտների շնորհման մասին» N 107-Ա հրամանում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) նախաբանում «10.1-ին հոդվածի» բառերից հետո լրացնել «3-րդ մաս» բառերը,

2) 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Հաստատել Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի կողմից 2024 թվականի դեկտեմբերի 5-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտե ներկայացված՝ քաղաքաշինության

բնագավառում նախատեսվող շարունակական մասնագիտական զարգացումն ապահովող «Էլեկտրաէներգետիկայի և էլեկտրատեխնիկայի ոլորտի մասնագետների վերապատրաստման լսարանային դասընթացներ» միջոցառման ծրագիրը և շնորհել 50 կրեդիտ

3) 1-ին կետից հետո լրացնել նոր՝ 1.1-ին կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.1 Հաստատել «Էլեկտրաէներգետիկայի և էլեկտրատեխնիկայի ոլորտի մասնագետների վերապատրաստման լսարանային դասընթացներ» միջոցառման իրականացման ժամանակացույցը՝ համաձայն Հավելվածի:»:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում այն ընդունելու մասին միջոցառման կազմակերպչին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

21.04.2025

X

ԵՂԻԱԶԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Signed by: VARDANYAN YEGHIAZAR 2614790133

Ե. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հավելված
ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի

2025 թվականի ապրիլի 21 -ի *N* 57 -Ա հրամանի

Հավելված
ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի
2024 թվականի դեկտեմբերի 3-ի *N* 107-Ա հրամանի

**«Էլեկտրաէներգետիկայի և էլեկտրատեխնիկայի ոլորտի մասնագետների վերապատրաստման լսարանային դասընթացներ» միջոցառման ժամանակացույց**

| Հ/Հ | Ամսաթիվ | Ժամ | Թեմայի անվանում | Դասախոսի անուն և ազգանուն | Դասընթացների անցկացման ձևաչափը և վայրը | Միջոցառման կրեդիտները | Հավաստագրման ենթակա համապատասխան մասնագիտությունը | Մասնակցության վճարի չափը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| | | | | | | | | |
| 1 | Հունվարի 14 -մարտի 14 | 18.30 | Էլեկտրաէներգետիկայի և էլեկտրատեխնիկայի ոլորտի մասնագետների վերապատր | ՀԱՊՀ էներգետիկայի և էլեկտրատեխնիկայի ինստիտուտի էլեկտրական մեքենաներ և | Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի, ք. Երևան, Տերյան 105 10-րդ մասնաշենք, 5-րդ հարկ, 10507 լսարան, վերապատրաստմա | 50 կրեդիտ | 07, 08, 09, 10 մասնագիտություններ (համաձայն ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 23.08.2023թ. N 06-Ն հրամանի) | 200.000 դրամ |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | աստման լարանային դասընթացներ | ապարատներ ամիոնի դոցենտներ Համբարյան Վարդան Կարապետի և Կուրղինյան Էդուարդ Վաղարշակի | ն լարանային դասընթացներ | | | |
| 2 | Ապրիլի 21 – Հունիսի 23 | 18.30 | Էլեկտրաէներգետիկայի և էլեկտրատեխնիկայի ոլորտի մասնագետների վերապատրաստման լարանային դասընթացներ | ՀԱՊՀ Էներգետիկայի և էլեկտրատեխնիկայի ինստիտուտի էլեկտրական մեքենաներ և ապարատներ ամիոնի դոցենտներ Համբարյան Վարդան Կարապետի և Կուրղինյան Էդուարդ Վաղարշակի | Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի, ք. Երևան, Տերյան 105 10-րդ մասնաշենք, 5-րդ հարկ, 10507 լսարան, վերապատրաստման լարանային դասընթացներ | 50 կրեդիտ | 07, 08, 09, 10 մասնագիտություններ (համաձայն ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 23.08.2023թ. N 06-Ն հրամանի) | 200.000 դրամ |